

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի, Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

Տ է Լ Է Ք օ ն № 253.

Հ ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Ր Գ Ի Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

Շ Ա Ր ՈՒ Ն Ա Կ Վ ՈՒ Մ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ ԲԱԺԱՆՈՒԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում 10 ռուբլի, Թուրքիայում 9 ռ., Եգիպտոսում 8 ռ., Կովկասում 7 ռ., Վրաստանում 6 ռ., Հնդկաստանում 5 ռ., Կորեայում 4 ռ., Կեղևանում 3 ռ., Կրկու ամսականը 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՍՐԱԿՐԱՍՏԱՆԸ:

Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցեով. Тифлисъ. Редакция «МШАКЪ»: Խաղաղասահմանից Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արեւելեան քրիստոնեաները. Պաշտօնական դեկլարացիա. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օրինակելի վարձուքը. Մեծ օրհնութիւնը. Ռուսաց թատրոն. Մատենադրութիւն. Նամակ երեսնից. Նամակ վերին-Ագուլիսից. Նամակ Զանգեզուրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՍՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից. Նամակ Պարսկաստանից.— ՀԵՌԱՎԻՆՆԵՐ.— ԲՈՐՍՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԱՐԵՎԵԼԵԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԸ

«Կրեան կղզու ապստամբութիւնը, ստում «Виржевия Вѣдомости» լրագրի մի առաջնորդող յօդուածում, ստիպեց եւրօպական հասարակական կարծիքը նորից օւշադրութիւն դարձնել Թիւրքիայի ազգաբնակչութեան տուտը վիճակի վրա: Եթէ կռնիք այն բոլորը, ինչ որ խօսվում է այդ առիթով եւրօպական մամուլի զանազան օրգաններում, չէ կարելի չը դալ այն եզրակացութեան, որ արտապայտած դատարարութիւնների մէջ շատ քիչ անկեղծութիւն, արգարադատութիւն և մարդասիրութիւն կայ: Այդ չէ վստահանում ուղղակի անկարեկցութիւն ցոյց տալ կրեատացիներին և չը յայտնել իր դժգոհութիւնը այն անհասարակութեան համար, որ պատճառում է կրեատացիների պահանջը՝ ազատվել ասիական բռնակալութիւնից: Բայց մի և նոյն ժամանակ ամենքը շատ պարզ են յայտնել իրանց վստահութիւնը դեպի Թիւրքաց սուլթանի անհրաժեշտութիւնը, կրկնելով, որ անհրաժեշտ է նրա տիրապետութեան ամբողջութիւնը պահպանել: Ամենալաւ ապացոյցը այն կեղծաբանութեան, որով վերաբերվում են Թիւրքիային և նրա քրիստոնեայ ազգաբնակչութեան վիճակին, կարող են ծառայել այն ծառերը, որ արտասանում են այժմ Աւստրո-Ունգարիայի պետական անձինքը: Այստեղ լրագրի առաջ բերելով կոմս Գօրնոսովի նորերս արտասանած ծառը Թիւրքիայի կենսունակութեան մասին և ցոյց տալով, թէ այդ ծառը որքան հակասում է ճշմարտութեան, քանի որ Աւստրո-Ունգարիան մինչև այսօր գրաւած է պահում Բոսնիա և Հերցեգովինա երկիրները՝ շարունակում է:

«Այդպիսի հանգամանքներում բարոյական տեսակետից շատ քիչ զին ունեն այն յանդիմանութիւնները և ամբաստանութիւնները, որոնք ներկայումս յաճախ ուղղվում են Անգլիայի հասցեին: Այս օրերս այդպիսի ամբաստանութիւններ արեց «Le Nord» լրագիրը, որ յուսակնութիւն ունի Պարսկում ուսաց օրգանի դեր կատարելը, բայց որը երբեմն ապշեցնում է

ընթերցողներին Ռուսաստանի մասին հաղորդած իր սխալ տեղեկութիւններով: Վերադարձելով կրեատական ապստամբութիւնը Անգլիայի «Նորթիւն»-ը, «Nord» լրագիրը յիշեցնում է անգլիական քաղաքականութեան նախկին բոլոր գործողութիւնները յօդուած Թիւրքիայի: Շատ իրաւացի կերպով նկատելով, որ Անգլիան երկար ժամանակ հանդիսացել է Թիւրքիայի պաշտպան և որ Թիւրքաց լուծի տակ գտնվող բոլոր քրիստոնեայ ազգերը ստացել են իրանց ազատութիւնը և անկախութիւնը հակառակ անգլիական քաղաքագետների ցանկալութեան, լրագիրը մեղադրում է անգլիացիներին կեղծաբանութեան և անհետեղականութեան մէջ, և ապստամբված կրեատացիներին խորհուրդ է տալիս իրանց յոյսերը դնել Թիւրքաց սուլթանի իմաստութեան վրա:

«Հեղա և տեսնել, թէ որքան համոզուցող է կարող են լինել այդ տեսակ խրատները այն քրիստոնեայ ազգերի համար, որոնք ստիպված են տանել ասիական բռնակալութեան բոլոր ճնշումները Թիւրքիայի պէս քայքայված պետութեան մէջ: Ենթադրելով, որ անգլիական քաղաքականութիւնը, պաշտպանելով քրիստոնեաներին և ձրգտելով կործանել Թիւրքիան, կարող է մեղադրվել անհետեղականութեան մէջ, բայց միթէ այդպիսի անհետեղականութիւնը աւելի զերապատելի չէ, և դեռ տեսնել, թէ ում կողմ կը լինի պատմութեան դատավճիռը—նրա կողմը, որը դադարել է եւրօպացում և նրա հարեան Փոքր-Ասիայում ասիական տիրապետութիւնը պաշտպանելուց, թէ նրա կողմը, որը ձգտում է պահպանել այդ մեռած, լուծվող մարմինը, յանձնելով ուրիշին իր ստեղծական, դարեւոր գործը, իր պատմական ստիճանակը: «Շատ կարելի է, — վերջացնում է լրագիրը իր յօդուածը, — որ Անգլիան գործում է անհետեղաբար, աւելի հաւանական է, որ հայերը, կրեատացիները և Թիւրքիայի լուծի տակ գտնվող միւս քրիստոնեայ ազգերը դառն կերպով ստալվում են Անգլիայի վրա դրած իրանց յոյսերի մէջ, բայց յամենայն դէպս, անգլիական քաղաքականութիւնը գործում է խելացի կերպով, աշխատելով իր օգտին դարձնել այն շահերը և ձգտումները, որոնց արդարութիւնը ոչ որ չէ համարձակում ժխտել: Իսկայնք, ոչ որ չէ հաւատում և չէ կարող հաւատալ ասիական պետութեան կենսունակութեան, և փոխանակ անօգուտ ջանքեր գործ դնելու այդ լուծվող դիտքը պահպանելու համար, աւելի լաւ կը լինէր ջանք գործ դնել գտնելու մի միջոց, որով կարելի լինէր վճնել խաղաղ կերպով հին «արեւելեան» հարցը:»

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

Յունիսի 5-ին, Անգլիայի պարլամենտի հրատարակութեամբ լայն տեսաւ հիւպատոս Ֆիցմօրիսի զեկուցադրը Ռեթիսի, Բերեքիկի և ուրիշ քաղաքների կոտորածների և հայերի կրօնափոխութեան մասին: Նա պարունակում է իր մէջ մի շարք փաստային վկայութիւններ, որոնք հաստատում են լրագրի մէջ հրատարակվածները:

Զեկուցադիրը սկսում է մի հեռագրով, որն ուղարկել է դեսպան Ֆիլիպ Կերրին լորդ Սոլսբրիին, յունվարի 29-ին: Այդ հեռագրի մէջ դեսպանն ասում է. «Սուլթանը իր ընդունելութեան ժամանակ, այս ամսի 15-ին, յայտնեց, որ իր ստացած զօկուսիտների համաձայն, օսմանեան կատարողները չեն նպատակ հայերի կրօնափոխութեան և զրուշացրել են, որ այդպիսի մի գործ կարող է կատարվել միայն ներքին

համոզմունքով: Ստաղէզդին փաշան հաղորդում է, որ նրա մօտ եկան Բայբուրդի գաւառի Բաւաճուր տեղից հայեր և յայտնեցին, որ իրանք մասնատական են դարձել և հայոց եկեղեցու վրա ծածանվում է մասնատական դրօշակը. սակայն նա մերժեց նրանց կրօնափոխութիւնը, հանել տուեց նրանց տուրքանները և եկեղեցուց վայր իջեցրեց դրօշակը:

«Բարբերդի մօտ հայերը ցանկացել էին մասնատականութիւն ընդունել. բայց Բ. Կուռը կարգադրել է, որ ընդունեն այդպիսի կրօնափոխութիւն: Մի հեռագրի մէջ, որ տուել են Լուսաւորական, կաթօլիկ և բողոքական հայերը, սկսած է, որ նրանք վաղելում են սուլթանի արքար վարչութեան ազատութիւնը և դիւրութիւնները, ոչ մի երկիւղ չունենալով իրանց կեանքի և սեփականութեան մասին և այժմ կամենում են մասնատականութիւն ընդունել բոլորովին ինքնակամ կերպով: Տեղական իշխանութիւնը հրահանգներ է ինդրում այդ անկեղծ կրօնափոխութեան ձեռնարկութիւնների վերաբերմամբ:»

Այս հիւպատոս Ֆիցմօրիս առաջ է բերում իր հետազօտութիւնները: Ֆիցմօրիս հասել է Բերեքիկի փետրվարի 25-ին և գտել է իր ընկերներին, որոնք արդէն հաղորդակցութեան մէջ էին մտել կրօնափոխների հետ: Նախ և առաջ ընտրօրիչ էր այն վիճակը, որի մէջ գտնվում էր աւերված քաղաքը, ուր կատարվել էին երկու դժոխային կոտորածներ: Նոյն իսկ Թիւրքիայի մի քանիսը սարսափած էին այնտեղ կատարվող ոճիրներից: Գնապատները մէկը միւսին անգամ մերժել էր առ իր գինւորներին՝ խանդարելու այն մարդսպան գործը, որ սկսել էին Թիւրքերը: Մի նշանաւոր քաղաքացի թիւրք խնդրել էր գնապատից մի քանի դրամոր մարդ փրկելու մարդկանց կենքը, սակայն գնապատը մերժել էր: Հայերի առաջ երկու ձանապարհ կար դրված կամ զրկվել կեանքից, կամ կրօնափոխ լինել: Կարող է այդտեղ հարց լինել ինքնակամ և ինքնահաճ կրօնափոխութեան մասին:

Այդ ինքնակամ և ներքին համոզմունքով կատարված կրօնափոխութիւնը տեղի է ունեցել կոտորածի առաւօտը, իսկ ով ուշացել էր այդ անկու, կամ չէր կամեցել կրօնը փոխելու, կոտորվեց և սպնչացաւ: Յունվարի 1-ի՝ կոտորածի օրվայ 1500 կրօնափոխները, որոնք պատկանում են 130 Լուսաւորական, 95 կաթօլիկ և 45 բողոքական տների, մինչև այժմ էլ իրանց սրտում ամենաջերմ քրիստոնեաներ են, բայց վախեցում են արձակ այդ խտտավանդ և իրանց առաջվայ կրօնը դառնալ: Բերեքիկում, Էնեղում, Զիբինում և Նիզիբում կրօնափոխ են եղել մինչև 2800 անձ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՎԱՐՄՈՒՆԵՐ

Մայրաքաղաքի ուսումնական վերջին ժամանակներս իր առանձին ուշադրութեան առարկայ է դարձրել գաւառական մամուլի վիճակը: Անժխտելի փաստ է, որ իր կոչման բարձրութեան վրա կանգնած, լուրջ, բարեխիղճ մամուլի օրգանը գաւառում անապին ծառայութիւններ կարող է մատուցանել ժողովրդին: Ղեկավարելով հասարակական կարծիքը, ստեղծելով նոյն իսկ հասարակական կարծիքը շատ տեղեւում, մերկայանելով զանազան հասարակութիւնների մէջ բուն դրած զեղծումները, մարակելով այս և այն հասարակական գործիչ անարժան և անվախ արարքները, առողջ, թաւր մտաւոր սնունդ մատակարարելով ընթերցող հասարակութեան, գաւառական օրգանը կարող է մեծ զարկ տալ գաւառի ընդհանուր զարգացման և առաջադիմութեան գործին:

Մակայն գաւառական մամուլը կարող է այդ օգտակար գործը բարեխղճութեամբ և աշուղթեամբ կատարել միայն այն դէպքում, երբ նա որոշ աստիճանի անկախութիւն ունի, և վախելում է տեղական իշխանութեան աջակցութիւնը և համակրութիւնը: Եթէ տեղական իշխանութեան ներկայացուցիչները Լուսաւոր, կըրթված և իրանց պաշտօնին լրջաբար վերաբերող անձինք են, և ամեն կերպ աշխատում են օգնել տեղական մամուլին՝ կատարելու իր ստանձնած դերը, և օրէնքի սահմանները մէջ նպատակ են նրա դարգացման ու բարձրացման են նրա հեղինակութիւնը ազգաբնակչութեան աչքում, փորձը ցոյց է տալիս, որ այդպիսի վերաբերմունքից չանվում է թէ ինքն իշխանութիւնը և թէ ազգաբնակչութիւնը:

Երբ օրինակ այդպիսի զեղեցիկ վերաբերմունքի, մայրաքաղաքի լրագիրները առաջ են բերում հետեւեալ դէպքը: Վեռտոյի քաղաքում հրատարակվող «Виржевий Край» լրագրի № 48-ի մէջ երևում է մի յօդուած, որ քննադատում է նահանգական վարչութեան ձեռք առած մի միջոցը: Վեռտոյի նահանգապետ Ֆ. Տրեպովը, որը, իբրև այդ լրագրի ցէնզոր, ամենայն հնարաւորութիւն և միջոց ունէր թոյլ չը տալու տըպել այդ յօդուածը, թոյլատրում է տպագրել, և ապա ինքն անձամբ ուղղում է մի նամակ լրագրի խմբագրութեան, որի մէջ մի առ մի, փաստերով հերքում է յօդուածագրի քննադատութիւնը և առաջ բերած իրողութիւնները:

Այդ հերքումի առիթով մայրաքաղաքի լրագիրներից մէկը հետեւեալն է ասում. «Տրեպով նահանգապետը կարող էր գործ դնել այն բեցեպառը, որ յանձնարարել է նահանգապետներին հանդուգեալ Շէքրինը, այն է նա կարող էր պարզաբար ասել լրագրին, «ցից», երբ նա ստացաւ թիւրքերէն ձեռնարկ համար, բայց ոչ, նա ունեցաւ քաղաքացիական քաղաքի թոյլ առ ամբողջ նահանգին կարող իր գործողութիւնները քննադատող յօդուածը և յետոյ, մի և նոյն լրագրում, դուրս եկաւ ինքն անձամբ հերքելու այդ քննադատութիւնը և իր առաջ բերած փաստերով վերջ տուեց բոլոր տարաձայնութիւններին: Նոյն կերպ վարվեց մի անգամ և Լիֆլանդիայի նախկին նահանգապետ, հանրուցեալ Չիլոսկիցը...»

Ի հարկէ, գաւառական մամուլը նկատելով այդպիսի վերաբերմունք իշխանութեան ներկայացուցիչների կողմից դեպի ինքը, կարող է աւելի ոյժ և թէ ստանալ, աւելի եռանդով առաջ տանել իր գործունէութիւնը, և աւելի համարձակ լինել իր քննադատող ընթացքի մէջ:

Հ. Ա.

ՄԵՌՈՒՆ ԵՐԵՎԱՆԻՆԸ

«Արարատ» վերջին համարում տպագրված է հետեւեալ պաշտօնական հրահրը. «Տ. Տ. Միլրտիչ Վեռտոյի և Սրբազնագոյն Կաթողիկոսան ամենայն Հայոց որոշել է Տեառն յաջողութեամբ կատարել հանդիսապէս Սրբաւոյ Միւռնի օրհնութիւնը յառաջիկայ սեպտեմբեր ամսոյ 29-ին, Վարազայ ս. խաչի տօնին: Հայաստանեայց ս. եկեղեցու ամենայն հարապառ գաւառները հրաւիրվում են ներկայ լինելու ըստ օրինակի բարեպաշտ նախնեաց, այդ մեծաշուք հանդիսին, որ մեր ս. եկեղեցու ամենաուրախական արարութիւնն է: Օր առաջ հրատարակելով այս աւանտին ի լուր հեռաքանակ հայ ժողովրդեան, լիայոյս ենք որ Հայոց Հայրիկի այս առաջին Միւռնի օրհնութեան հանդէսը սլիտի յորդոք ջերմեանազ անձկութեամբ ուխտաւոր ժողովուրդ Հայոց ի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Էջմիածնի այդ հրահրին մենք մեր կողմից կաւեւացնենք ահա թէ ինչ.— ժողովրդին հրահրելու հետ միասին պատրաստութիւն պէտք է տեսնել նրան ընդունելու, նրան արժանաւոր

կերպով հերքաւրելու համար: Գաղտնիք չէ ոչ սրի համար, որ Լյովիանին գնացողները թէ մեծօրհնութեան և թէ ուրիշ հանդէսների ժամանակ՝ վերադառնում են իրանց տեղերը ամենամանր սպասարկութեան տակ, կրկնելով որ Մայր-Աթոռի մէջ ոչինչ չուրան չը տեսնան, ոչինչ հերքաւրելութեան չարժանացան, ոչ մի սիրալիր ընդունելութիւն չը գտան: Ժողովրդի տարբերակ սարող վանքի համար՝ դա յանցանք է: Ուստի պարտաւորութիւն ենք դնում Լյովիանին զեկավարների վրա՝ հայոց հասարակութեան հրաւեր կարգաւ հետ միասին՝ պատրաստութիւն տեսնել նրան ընդունելու և նրան որ և է միջնորդական բան ցոյց տալու համար: Եստի, շատ ծանր կը լինի հետեւանքը, եթէ Լյովիանին ցոյց տայ հայ ժողովրդին իրան այնպէս, ինչպէս նա այժմ է:

ՌՈՒՍԱՅ ՌԱՏՐՈՒՆ

Ազնուականների թաղանթները կիրակի, յունիսի 9-ին, դերասան Արիստոս նախաձեռնութեամբ, ուսուցիչ սիրողների խումբը ներկայացրեց Օստրոփուկու և Սթովոփի «На пороге къ дѣву» պիէսը:

Մի գեղեցիկ, ջանք, բայց բոլորովին անիրօժ օրերը, մեծ յոյսեր դնելով իր ոյժի վրա, թողնում է Մոսկովան, որտեղ նոր է աւարակ իր ուսումը և գնում է մի հեռավոր գիւղ վարժուհու պաշտօնով: Սակայն օրերը հէնց առաջին օրից դանազան, մեծ մասամբ էրօտիքական միբարտարաններ է ենթարկելով գիւղական տանուտէրի, գրագրի, ուսումնական խորհրդի անդամի և սրա նախանձատ ամուսնու կողմից: Օրերը մի քանի անգամ յուսահատուած է, բայց հաստատ է մնում իր վճռին՝ մինչև վերջ տանել սկսածը: Խօսք չը կայ, որ օրերը մինչև վերջ չէր կարող տանել այդպիսի կեանք, մանաւանդ որ տանուտէրը վճռում է իր գրագրին ամուսնացնել նրա հետ, բայց վարժուհու բազմազնից գիւղին է գալիս մտակարար ջարդերից մի քանակ, որը օրերը տեսնել էր արդէն մի անգամ, երբ այս վերջին տեղից էր արդէն մի անգամ անցնելու արագ գործիչը: Գաստառը համոզում է օրերը մի օրով գնալ նրա մօտ հիւր, պատճառաբանելով թէ իր քոյրը շատ է ուղում ծանօթանալ հետը: Օրերը համաձայնվում է և գնում է քաղաք, որտեղ դատարարի քոյր հետ ծանօթանում է: Գաստառի քոյրը նկատելով իր կողմը դրացիները դէպի վարժուհին, յայտնում է սրան եղբոր գաղտնիքները: Օրերը, որը հաւանում է դատարարին, համաձայնվում է ամուսնանալ նրա հետ:

Ահա այս է կոմեդիայի բովանդակութիւնը: Գերակատարները, ինչպէս ասացինք, սիրողներ էին: Վարժուհու գերը կատարում էր Կ. Ալիս-Ֆիելան, որը լաւ հասկացել և ուսումնասիրել էր իր գերը: Առաջին գործողութեան մէջ քիչ աստը խաղաց, բայց երկրորդ և երրորդ գործողութիւններում բոլորովին սիրալիկացել էր նրան, և մի քանի տեսարաններ նոյն իսկ գեղեցիկ խաղաց: Միտ գերակատարներից շատ լաւ էր Կ. Կոզլիկովը՝ ուսումնասիրած ծառայ Ալիսին դէրու: Գա ծառայութիւնը վերջացրած մի ծեր ղինուր է, որը չը նայած որ շատ պատերազմներուն է եղել, շատ արիւն է թափել, բայց ունի շատ բարի և քնքարչ սիրտ: Բաւարար էին օր. Ալիսիէկով, Պ. Կորեակովը՝ գիւղական ամուսնուհի գերու: Միտ սիրողները նոյնպէս բարեխղճաբար էին վերաբերվել դէպի իրանց գերերը, այնպէս որ կոմեդիան անցաւ ընդհանրապէս լաւ:

Յ. Տ.-Միք.

ՄՍՏՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Գ. ուր ս ե ի ն և բ ը», վէպ Շանթի, 1896, թիֆլիս:

Եթէ սովորական մարդկանց սովորական կեանքի, նիստ ու կացի, հոգսերի, զբաղմունքների պատմութիւնը վէպ անուանենք, այն ժամանակ վէպերով կը լցվի աշխարհը: Եթէ վերցնենք ու նկարագրենք պատահական մարդկանց կեանքում տեղի ունեցած զանազան արկածները, նրանց զանազան կարծիքները կեանքի այս կամ այն խնդրի մասին գրի առնենք՝ միթէ այդ վէպ կը

լինի... Ինչ է վէպը.—անշուշտ կեանքից վերցրած մի պատմութիւն: Բայց այնպիսի մի պատմութիւն, որ իր մէջ ամփոփում է մի ամբողջ ժամանակաշրջան, որի մէջ ցղանում է մարդկանց կեանքը, իր էական, ընդհանուր ընտրող գոյներով: Վիպասանը իր գրութեան մէջ ստեղծագործում է կեանքի ողին, մարդկանց ընդհանուր ձգտումները, նրանց պատմական, ընդհանուր իդէալը, ընդհանուր ցանկութիւնները, իդէալները: Ուրեմն վէպը մի իրիտօրայական ընդհանրացում է (обобщение) իրական կեանքի և վէպի մէջ դուրս բերած գաղափարական անհասուններ էլ մի-մի ներկայացուցիչներ են մասնաւոր գաղափարների, որոնց ընդհանուր դատարարութիւնից առաջանում է վէպի ամբողջութիւնը—կեանքը: Եւ այդ մասնաւոր կենսական պայմանների, կամ գաղափարների ներկայացուցիչները (տիպերը) իրար հետ միանում են դարձեալ ներքին, գաղափարական կապերով, որոնք կոչվում են կեանքի լոգիկա, այդ լոգիկան ընդունել և հասկանալը վիպասանի թափանցող, փիլիսոփայական խելքի նշուքն է:

Մարդ տարրական կանօնը պ. Շանթի աւելորդ է համարել իր «Կարեւորները» գրքի մէջ: Մի քանի թիւրքահայ գաւառացի երիտասարդներ, գաղտնի Պոլիս՝ ծանօթանում են իրար հետ, մտիկանում են այնչափ, որ միմեանց մեծարում են շնորհակալութիւններով: Իսկ ընկերներ, ամեն բան ասում են իրար, բայց են անտու իրանց սրտի և մաքի գաղտնիքները, ընկերական վիճաբանութիւնների ժամանակ երիտասարդները տաքանում են, խօսում են զանազան խնդիրների մասին, ծիծաղում, սրախօսութիւններ են անում, ուսում են, խումբ, գաւառացիներ: Եւ այդպէս անցնում է նրանց ամբողջ ժամանակը: Երիտասարդներից երկուսը՝ Բազրատ և Գեորգ աշխատում են մանկավարժական ապագա ընդունելու, մէկը՝ Սարգիսը, փորձում է իր ոյժերը գրականութեան, հրատարակչութեան մէջ, իսկ մի ուրիշն էլ—Վասակ անուանով, որ ոչ մի զբաղմունք չունի, պարզում է հօր հաշուի և աջ ու ձախ հայտնում է գրականութիւն, մասնաւոր, զգրոց և ամեն տեսակ հասարակական գործունէութիւն: Գեորգն ու Բազրատը, իբրև մանկավարժներ, աշխատում են ուսում, լուսաւորութիւն տարածել թէ մասնաւոր սերնդի և թէ հասակավոր ժողովրդի մէջ, ապրում են միասին, սենեակ են վարձել մի ֆրանսիացի ընտանիքի մէջ: Այդ ընտանիքում կան երեք աղջիկ, որոնց հետ սաստիկ մօտ յարաբերութեան մէջ են մըստում մեր երիտասարդ մանկավարժները: Ազատ ընտանիքի սիրում, սերվում, համբուրվում, սիրախաղութիւններ են անում աղջիկներին հետ: Այդպէս անցնում է մի ուսումնական շրջան, որի վերջը Բազրատն ու Գեորգը հրաժարվում են զբոլորից և մայրաքաղաքից վերադառնում են գաւառ: Վասակը գնում է արտասահման ուսումը շարունակելու, և այդպէս ցրվում, բաժանվում, հեռանում են միմեանցից, վերջանում է ամեն բան, նոյն իսկ և գրութեանը:

Բան հասկացած, ընթիւքող:

Հեղինակը ամենից շատ խօսում է Բազրատի մասին, կարծես ուղում է նրան իր գրութեան «հերոս» յայտարարել: Նրա տեղով, այդ իր Բազրատը ուսումնասիրել է Ռուսաստանում, երկու է Պոլիս, որպէս մի լուրջ, պատրաստված երիտասարդ, գործունէաց և գործը կամքի տէր: Սակայն այդ յանձնարարականները վէպի գործողութեան մէջ ոչ մի տեղ չեն արդարանում: Դատարարով և Բազրատի կեանքը մեղ համարում է միայն, որ նա ոչ լուրջ է, ոչ զբաղացած է և ոչ էլ մի առանձին գործունէութեան ընդունակ: Հեղինակը նրան և նրա ընկերին կեանքի ամենանորոգը վայելքներից առատ բաժին է հանում, վայելքներ, որ պարզում են հայ շարժիչներին: Այն երեք աղջիկները, որոնց հետ նրանք ծանօթացել են ֆրանսիացի տիկնոջ տանը: Այդ երեքի հետ էլ մեր մանկավարժները անխորհր համարվում, սերվում ու զուարճանում են, և այնպէս հեղա, այնպէս համարձակ, որ կարծես թէ երեք աղջիկներն էլ իրանց սեփականութիւններն են:

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՅ

Յունիսի 3-ին երէկ, կիրակի, առաւօտեան ժամի 11-ին, քա-

ղաքային դումայի դահլիճում Բարեգործական ընկերութեան ժողով էր նշանակված. ներկայ էին 24 հոգի. կային և կողմնակի անձինք: Նախ քան բուն պարագմունքին դիմելու, ընտրեցին ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար: Միաձայն ընտրվեցին՝ Վ. Եղիազարեանը՝ նախագահ, և Ա. Արամեանը՝ քարտուղար:

Այս ժողովը զինեց աղքատանցի բացման հարցին: Աղքատանցի համար կազմված մասնաժողովի անդամներից երկուսը՝ Գ. Վարաչեանց և Ս. Տէր-Մարտիրոսեանց կարգացին իրանց զեկուցումները: Առաջինը՝ Երեւոյում գոյութիւն ունեցող նոյնանուն հիմնարկութիւնների մասին, կրկնորդը՝ Ռուսաստանում գոյութիւն ունեցող ներքին մասին: Երկուսն էլ չեղում էին բացման նպատակը—աշխատանքի առն չիմել, ուր զանազան մարդիկ կարող լինեն աշխատել և այդ աշխատանքի արդիւնքով պահել և իրանց և այնտեղ գտնուող թշուառներին: Այս մի քանորդ ժամի չափ վճռում էին այն մասին թէ ինչ անուն տան՝ արդեօք «աշխատանքի առն», «աղքատանց» թէ «անկեղանց»: Նոյն հարցի մասին ժողովը վճռեց կազմել մի մասնաժողով, որը պէտք է մշակէ թէ կանօնադրութիւնը և թէ պէտք է զինէ թղթատուական համար: Մասնաժողովի համար ընտրվեցին հետեւեալ անձինք՝ Վ. Եղիազարեանց, Ս. Տէր-Մարտիրոսեանց, Ա. Աղաւիթեանց, Գ. Արամեանց, Գ. Վարաչեանց, Գ. Տէր-Խաչատրեանց, տիկին Հ. Տէր-Մկրտչեանց, բժ. Յ. Յովհաննիսեանց: Ժողովը ցրվեց այն յոյսով, որ ապագայում Երևանում գոյութիւն կունենայ աղքատանց ամենալայն հիմքերի վրա դրած:

Հաստատ աղբիւրից լուր ստացանք, որ անցեալ երեքշաբթի կարկուտ է եկել Գառնիբաւար գաւառակում և մեծ յիաս է հասցրել թէ խաղողի այգիներին, թէ ծառայողներին և թէ ցանքերին:

ՆԱՄԱԿ ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԹԻՒՆՅ

Մայիսի 25-ին Մայիսի 14-ը, Նոյն կայսերական Մեծութիւնների թագադրութեան օրը՝ մեղ մօտ մեծ չքով տօնվեց: Ի պատիւ այդ օրվայ ճաշ էր պատրաստված ս. Աստուածածնի ուխտատեղում: Տանուտէրը, ժամը 3-ին ստանալով պրիստաւից Մոսկովայում կատարված թագադրութեան լուրը, յայտնեց ներկայ եղողներին, որոնք ընդունեցին երկարատև ուրաներով: Ճաշը տեղի ունեցավ Երեւոյում, որը տեղի պիտի ունենար վրդական զբօսանքին, որը տեղի պիտի ունենար Բազարի՝ հրապարակում: Հրապարակը և շինական գատարանը գեղեցիկ կերպով զարդարված և լուսաւորված էին: Ամբողջ երեկոյ ամուսն էր ստիական երաժշտութիւնը: Երկու սեռի հասարակութիւնը այդ երեկոյ խունվել էր հրապարակը: Մէկ կողմից ստիական երաժշտութիւնը, միւս կողմից երգեցողութիւնը, հրավառութիւնն ու հրացանաձգութիւնները գեղեցիկ տեսարան էին ներկայացնում և ուրախ սպասարկութիւն թողնում ժողովրդի վրա: Այդ տեսակ երեկոյի ստալին անգամն է տեղի ունենում մեղ մօտ Աշքի առաջ ունենալով այն ուրախ սպասարկութիւնը, որ թողեց բոլորի վրա, շատերի մէջ միտք յղացաւ, եթէ կարելի է, ամուսնայ ընթացքում մի քանի անգամ կայացնել այդ տեսակ զբօսանք ժողովրդի համար: Նոյն ուրախութիւնը կրկնվեց հետեւեալ երկու օրը: Երկրորդ օրը թուրք երիտասարդներն էին ուրախանում, իսկ երրորդ օրը տեղի ունեցաւ հայ հասարակութեան ընթիւքը, որին ներկայ էին 50 հոգի: Ընթիւքի ժամանակ առաջարկվեց թագաւոր Կայսրի և Թագուհի կայսրուհու կենացը, որն ընդունվեց ուրաներով: Ընթիւքից յետոյ եղաւ պար:

ՆԱՄԱԿ ԶԱՆԳԵՂՈՒԹԻՅ

Մեր գաւառում խոսակցութեան նիւթը կրկին Նաբին է: Ելուտէ, ստում են, Նաբին չէ սպանվել, նա կենդանի է և պատրաստութիւններ է տեսնում կրկին յարձակումներ գործելու ու թաւանդելու: Պատմողները յայտնում են նոյն իսկ

Մայիսի 10-ին

Մեր գաւառում խոսակցութեան նիւթը կրկին Նաբին է: Ելուտէ, ստում են, Նաբին չէ սպանվել, նա կենդանի է և պատրաստութիւններ է տեսնում կրկին յարձակումներ գործելու ու թաւանդելու: Պատմողները յայտնում են նոյն իսկ

այն գիւղերի անունները, որոնց պատիւ պիտի անէ այցելութեան զով յայտնի աւազակապետը՝ Նաբին տեսել են այս ինչ անտառում, այն ինչ ձորակում: Եւ այլ այսպիսի պատմութիւններ: Թէ որքան ճիշդ են վերն յիշածները և այդ մասին պատմվածները, չենք կարող երաշխաւորել, մենք միայն գրի ենք առնում այն բոլորը, ինչ որ պատմում է ժողովրդի բերանում: Զանգեղուրի ամեն քունջ ու պուճախում: Ժողովուրդը մի ասացված ունի, որն այս դէպքում շատ տեղն է՝ «Ընթիւքը չէ լինի, սխալը կը լինի»:

Կեռ լրագիրներում չէր սպված Նաբին սպանման լուրը, երբ նա մեղանում տարածվեց, թէ ինչ աղբիւրից էր այդ ոչ սը յիմացաւ: Սակայն բոլորն էլ թերահաւատութեամբ վերաբերվեցին այդ լուրին: Դատերի կարծիքն էր, որ այս բոլորի հեղինակը—ինքը Նաբին է, և այդ անում է նա միամտացնելու, քնացնելու ժողովրդին և ոստիկանութեան, որպէս զի մի գեղեցիկ օր կրկին երկայ իր խմբով ու կողպատուներ գործէ: Սրանից մօտ մի ամիս առաջ ստում էին՝ իբր թէ տեսել են Նաբին 18—20 ձիւտներով Երասխի միւս ափով դէպի հարաւ գնալու: Նորերս էլ լուր տարածեցին, որ տեսել են Ար-Բէնի գիւղում անգլիս Երասխի միւս ափով, 25—30 ձիւտեր, որոնցից մէկը տկուր ձիւտ վրա նըստած Երասխի գետի մէջ վեր ու վայր է եղել գնում և ըստ երկույթին ծանծաղուտ տեղը որոշում՝ անցնելու համար: Այդ խումբը համարում են Նաբինը:

Այսքանն էլ, կարծում ենք, բաւական է, ցոյց տալու համար թէ ինչ լարված գրութեամբ Զանգեղուրում հետևում են Նաբին ու իր խմբին: Անկասկած, ճիշդ է Նաբին սպանվելը, սակայն նրա հաշակը ու սարսափը այնքան մեծ է, որ բաւական է եթէ 25—30 ձիւտներից լարված մի խումբ երկայ մի որ և է տեղում, կամ նոյն իսկ գիւղում, մարդիկ դրան Նաբին խումբն են համարելու և լեզուպատառ ընկնելու են այդ դպրերի ճանկը: Աղքատանցիկեան այդ վախեցում վիճակի վրա անհրաժեշտ է ուղք գարծնել: Վախեցում ժողովրդի մէջ Նաբին առնումով ով ինչ առեք կարող է անել: Գարծնում ենք Զանգեղուրի պ. գաւառակապետի ուղադրութիւնը այդ հանգամանքի վրա. մեր կարծիքով այս բոլորի առաջն առնելու միակ միջոցը՝ տեղական ժողովրդին հրացաններով վերադարձնել է, որով կարող կը լինեն իրանք իրանց կայքը, դոյրը և կեանքը պաշտպանելու և այդպիսով օգրնել պոլիցիային աւազակութեան առաջն առնելու: Զանգեղուրի բնութիւնը շատ նպատաւոր պայմաններ ունի աւազակութեան համար. աւելացրեք դրա վրա աղքատ ու անգլիս ժողովրդի ահամայ աջակցութիւնը աւազակներին և Պարսկաստանի սահմանակից լինելը, և այն ժամանակ հասկանալի կը դառնայ, որ ճշմարիտ անհրաժեշտ է ժողովրդին միջոց տալ աւազակներից պաշտպանվելու համար:

Զ-ցի

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալցխա, մայիսի 28-ին Մրանով խնդրում ենք «Մշակի» առաջինկայ համարներից մէկում տեղ տաք այս մեր հետեւեալ գրութեանը «Մարտ» ամսագրի № 3—4-ում լայն տեսած «Հայոց Բարեգործական ընկերութեան Ախալցխայի ճիւղի վարչութեան»: յօդուածի առիթով:

Պ. Լուսինի-Արաոխանեան փոխանակ մեր՝ 17 ապրիլի թուով գրած յօդուածի կէտերին պատասխանելու և փաստեր բերելու վարչութեան զանցառութիւնների մասին, իր վերոյիշեալ յօդուածում գրեթէ ամբողջապէս պտտվում է պ. Խ. Մէլիք-Հայկազեանի պատուաւոր անդամ ընտրելու խնդրի շուրջը, մի խնդրի, որի մասին, ինչպէս յայտնել էինք մեր նախորդ յօդուածում, այնքան զրկել ու խօսվել է, որ նորից հարկ չէ տեսնվում պարզելու, նոյն իսկ ձանձրալի է ընթիւքողների համար: Մենք այդ խնդրը փակված ենք համարում:

Ապացուցանելու համար, որ իբր թէ Ախալցխայի վարչութիւնը զանցառութիւններ է արել իր գործունէութեան մէջ, պ. Լուսինի-Արաոխանեան առաջ է բերում խորհրդի արձանագրութեան մի կտոր: Պէտք է նկատել, որ պարունի այդ ապացոյցը շատ թույլ է: Վարչութեան նախկին կազմակերպութեան մի գրութիւնը ձե-

Լակնուրիան կողմից մասնաւոր թիւրիմացութեան տեղի է տուել, բայց երբ խորհուրդը ըստացել է Արաբիայի վարչութեան 1893 թ.ի մայիսի 4 թ. № 11 գրութիւնը՝ վերջինիս առած բացատրութիւնը միանգամայն բաւարար է գտել, և այսպիսով խորհուրդի և վարչութեան մէջ ծագած սարսափապետութիւնը վերացվել է, և հարցը վճարվել է յօդուտ տեղական բաժնի: Մենք մեղաւոր չենք, որ պ. Լուսինի-Արասխանեան անտեղեկ է պաշտօնական գրութիւններին: Պարունը, իբրև խմբագիր, պէտք է իմանայ, որ նախ քան հրատարակ գալը պարտաւոր էր տեղեկանալ գործերին, և ապա արդէն անձնատուան հերթով յայտնել իր կարծիքները, դատէր ու դատարիտէր վարչութեան գործունէութիւնը, ձեռքին ունենալով փաստեր. բայց քանի որ այդ այդպէս չէ, չունի և ոչ մի փաստ զինչու վարչութեան առջև, պարտաւոր է լռել և չը խօսել այն բաների մասին, որոնց մասին գաղափար չունի: Համոզվելու համար, որ Արաբիայի վարչութիւնը դանցաւորութիւններ չէ ունեցել, առաջարկում ենք պ. Լուսինի-Արասխանեանին կարգաւ խորհուրդի դիմանում, եթէ այդ հնարաւոր է, տեղիս բաժնի նախկին վարչութեան գրադրութիւնները: Վարչութիւնս զբրբերելով բաժնի գործերը՝ դանցաւորութիւններ չը տեսաւ, հետևապէս պ. Լուսինի-Արասխանեանի առածը վարչութեանն նկատմամբ միանգամայն անհիմն է և նրա վրա երևակայութեան արդիւնք:

Պ. Լուսինի-Արասխանեանի յօդուածի միւս մասը թողնում ենք անպատասխան, ըստ որում այնտեղ գործին վերաբերող ոչ մի փաստ չենք գտնում, բացի անտեղի դատարարութիւններից և սովետարարութիւններից:

Յ. Գ. «Տարազի» լռելիայնից դուրի և իրար հակասող գրութիւնները թողնում ենք անպատասխան:

Վարչութեան փոխ-նախագահ՝ Ա. Միլեօնեանց Անդամ-քարտուղար՝ Ս. Տէր-Կարապետեանց

ՆԵՐՒՆԻ ԼՈՒՐԵՐ

Երէկ զիշեր, Կ. Պոլսից ստացանք հետեւեալ հեռագիրը, Ռուսաց գործակալութեան միջնոցով, յունիսի 10-ից. «Հրատարակված է սուլթանի իրազէն, Չէլթոնում քրիստոնէայ նաճանգապետ նշանակելու մասին»:

Մեզ հաղորդում են, որ այս օրերս վանից յիսուն հոգի են եկել թիֆլիս, այստեղ աշխատանք և արտաւտ գտնելու նպատակով: Եկողների հետ կան և երեք ընտանիք: Այդ խմբովին պանդխտութեան պատճառը՝ վանում տիրող անտանելի վիճակն է:

Էջմիածնի պաշտօնական օրգանը հաղորդում է հետեւեալը. «Թագադրութեան մաղթանքից վերջը Նորին վեհափառութիւնը հեռագիր ուղղեց Նոյնի Մեծութեանց ի Կրէմլ, որին ի պատասխան ստացվեց մայիսի 31-ին ներքին գործոց նախարարի № 1429 գրութիւնը, մայիսի 22-ից, որով պ. նախարարը յայտնում է Նորին վեհափառութեան, որ Թագաւոր Այսրը հաճեց իւր իսկ ձեռքով գրելու Նորին սրբութեան հեռագրի մասին արած ամենանպատակօրէն զեկուցման վրա՝ չի սրտէ չնորհակալ ենք»:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ անցեալ տարի Կազան քաղաքում քննվում էր մի վերին աստիճանի հետաքրքիր գաղտնաբերական գործ՝ մօլդանական աղանդին հետեւողների վերաբերութեամբ: Գաղտնաբեր մեղադրում էր վտանգներին, որ իբր թէ նրանք մարդկային զոհեր են անում իրանց կրօնական ծրարակատարութեան ժամանակ և դատապարտեց մեղադրողներին: Այս տարի վերաքննից գործը և դատարանը արդարացից վտանակներին: Գաղտնաբեր արդարացի վճիռը մեծ տպաւորութիւն գործեց, և հասարակութիւնը զարգացրեց դատաստանական զայնչը՝ ծախարարութիւններով: Վտանակների ներկայ դատաստանական գործը նշանաւոր է այն կողմից, որ գործի մէջ մեծ դեր կատարեցին մամուլը և հասարակական կարծիքը, պաշտպան հանդիսանալով վտանակներին և հերքելով ամեն մի կասկած նրանց վերաբերած մարդապան սովորութիւնների դէմ:

Երկու օր առաջ վանի ուսուցիչ փոխ-հիւպատոսը եկաւ թիֆլիս:

Անդրկովկասեան երկաթուղու գնացքները այժմ երթեկուտ են կանոնաւոր կերպով: Գըլխաւոր գծի վրա վերադառած են նորագութիւնները և այժմ բանւորները զբաղված են երկրորդական նորագութիւններով:

Շարքի օր, ամսին 8-ին, թիֆլիսի արհեստաւորների վարչութիւնը, ընտրութիւնների արձանագրութիւնը կազմելով՝ պաշտօնական հարկաւոր թղթերի հետ ուղարկեց թիֆլիսի նաճանգապետին՝ արհեստաւորների նորընտիր ղեկաւորին իր պաշտօնում հաստատելու համար: «Кавказъ» լրագրի մէջ տպված տեղեկութիւնը, թէ այդ թղթերը ուղարկվել են նաճանգապետին ամսին 6-ին՝ ճիշդ չէ:

ԱրձԱՂԱՎԱՐԻՅ մեզ գրում են. «Յունիսի 2-ին այստեղ, իր ընտրարանում, ստորձանակով ինքնապատրաստութիւն գործեց երիտասարդ կալուածատէր Մուսիսեւով: Հանգուցեալի մայրը և քոյրերը եկան և մարմինը փոխադրեցին Արաբիսա՝ իր ծննդավայրը»:

ՂԱԶԱՅԻ գաւառի Բարնայ զիւղից մեզ զբրում են. «Անձրեները ամեն օր անպակաս են մեզանում. դաշտային և այգիների աշխատանքները դադարած են: Այդ բոլորի վրա աւելացաւ մի ուրիշ դժբաղդութիւն ևս. յունիսի 5-ին, ժամը 1-ից 10 րոպէ անց, երկինքը ծածկվեց ամպերով, և սկսվեց կարկուտ, որ տևեց 10 րոպէ: Կարկուտը ոչնչացրեց Բարնայ սարի Ղալաչա կաշված մասի արտերը և այգիները: Մօտ երկու հարիւր օրավար արտեր է փչացրել»:

ԱրձԱՂԱՎԱՐԻՅ մեզ գրում են. «Մեզ մօտ զեռ չարունակվում են անձրեները: Շատ աներ կաթում են, շատ խարխուլ աներ էլ փվել են: Մարդկային ոչ մի զոհ, բարեբաղդաբար՝ չէ եղել: Սրբորոցաց զարդից մի դասատուն էլ այս զիշեր ամբողջովին փլվեց, ցաւալի տեսարան է ներկայացնում: Հողաբարձութիւնը մտադիր էր ուսումնարանի նոր շէնութեան հիմքը դնելու, բայց առ այժմ յետաձգեց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսաց գործակալութիւնը հեռագրում է մեզ Կ. Պոլսից, յունիսի 7-ից. «Յունիսի 5-ին, վանի վաղից Բ. Գուռը հեռագիր ստացաւ՝ անցեալ օրը վանում տեղի ունեցած անցքերի մասին: Այդ հեռագրի համաձայն, մի հայ աղվիկ կալանաւորումը, որը յեղափոխական բովանդակութիւն ունեցող թիւրքեր ունէր իր մօտ, յազումն առաջ բերեց հայերի մէջ, և վերջինները իրանց աներից սկսեցին հրացաններ պարսկ թիւրքաց զինւորների վրա: Տեսեր և խանութիւնը փակվեցին: Հայերի և մանկեակականների մէջ տեղի էին ունենում կռիւներ: Հայերի մօտ գտնվել են շատ զէնքեր և նիկելած գործիքներ»:

Վիեննայից, նոյն գործակալութիւնը հեռագրում է, «Վանում կատարված դէպքերը աւելի լուրջ բնուրուութիւն ունեն, քան պաշտօնապէս հաղորդվածը, և յազում առաջ բերին: Կոտորվածների թիւը 50-ից անցնում է: Հայերի մօտ գտնված զէնքերը—պարսկական ծագում ունեն»:

Մենք ստացանք Վիեննայից, Ռուսաց գործակալութիւնից հետեւեալ հեռագիրը. «Կ. Պոլսից հեռագրում են, որ խայրանում կրկին խառնակութիւններ տեղի ունեցան. զրուգները սրի անցկացրին երեք վաշտ զօրքեր: Գամակոսից ստացված հաղորդագրութիւնը հաստատում է Վիեննայի տեղեկութիւնները զրուգների սպասարարութեան մասին: Այդ հաղորդագրութեան հիման վրա, զրուգները սրի անցրին չորս վաշտերի արիւնքին մի քանի թնդանօթներ: Այժմեան սպասարարութիւնը, ըստ երևոյթի, աւելի լուրջ բնուրուութիւն ունի, քան անցեալ տարիները»:

Մենք արդէն հաղորդեցինք, որ Անատոլ Լեռու-Բօլէօ յունիսի 9-ին Պարիզում պէտք է

կարգար մի դատախօսութիւն հայերի մասին: Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ այդ դատախօսութիւնն արդէն տեղի ունեցաւ: Գաղտնաբեր յայտնեց այն զլխաւոր միտքը, թէ Եւրօպայի պարտաւորութիւնն է միջամտել և օգնել հայերին: Ռեմիտիւրներ թուում էին Նուրաթ փաշան և հայր Շարքեան:

Հերթօրդի երկուրորդը դիմել է իր թեմին հետեւել չըջարեակամով: «Կիրեւի կողայր ի Քրիստոս, հրաւիրում եմ ձեզ խնդրելու ձեր հօտին՝ միայնել իրանց արթնքները՝ հայերի թըշուառութիւնը և դժբաղդութիւնը վերացնելու համար: Հայերի վիճակը չէ բարւոքվում, այլ օրից օր վատթարանում է: Ֆիլոսոփիա զեկուցողները ներկայացնում է հաղարաւոր թշուառ կանանց և երեխաների տխուր պատկերը: Լաւ է, որ մենք՝ քրիստոնէութիւն գաւանդներս, որ սպարում ենք հանդիստ և ապահով մոռանալք մեր պարտաւորութիւնը և պատասխանատուութիւնը մեր եղբայրակիցներին վերաբերութեամբ: Պէտք է աղօթեմք Աստուծուն հայերի համար և օգնենք մեր կարողութեան չափ»:

Ռուսաց հեռագրական գործակալութիւնը Վիեննայից հեռագրում է հետեւեալը: «Ֆիլոսոփիայի վրայով հեռագրում են, որ Կ. Պոլսում սպանվել են հայ յեղափոխական կոմիտէի որսուցիչ յունիսի 1-ին՝ սօֆիայի մի հայ և յունիսի 2-ին՝ թիւրքաց գաղտնի ոստիկանութեան մէջ ծառայող մի հայ»:

Մի քանի ժամանակ առաջ Կ. Պոլսից մի հեռագիր յայտնեց, որ այդտեղ շատ անհանգստանում են վարնայում կայացած մի ժողովի առիթով: Այժմ արտասահմանեան լրագիրներից իմանում ենք, որ վարնայում կայացել է մակէդոնացիներին մի մեծագումար ժողով, որին մասնակցել են և բաղմաթիւ հայեր: Այդ ժողովում խօսվել են բազմաթիւ ձևեր և յայտնվել են բողոքներ Մակէդոնայի արված ընթացիկների դէմ, գտնելով որ նրանք շատ չնչին են, և պահանջում են, որ Մակէդոնայի արվի ինքնավարութիւնը Հայերը նայնպէս յայտնել են իրանց գանգաւանները:

Բէրլինի «Norddeutsche All. Zeitung» լրագրում տպված է հետեւեալ յայտարարութիւնը: «Կրէտէ կղզում ծագած խռովութիւնների առիթով թիւրքայում գոյութիւն ունեցող բազմաթիւ հայ կոմիտէաները սկսել են եռանդուն գործունէութիւն ցոյց տալ, բայց և թիւրքաց ոստիկանութիւնը դնած չէ: Այս օրերս կալանաւորեցին երկու հայ, որոնք 200 հոգուց բաղկացած մի գաղտնի ընկերութեան պարագլուխներն էին: Խուզարկելով նրանց ընտրարանները, ոստիկանութիւնը գտաւ մի տիկնոջ գրած սպառնական նամակ և զանազան աղտոտման հրաւերներ: Կետիկ-պաշայում (Կ. Պոլսի արտաբնակներից մէկում) բանտարկվել է Յակոբ անունով մի հայ, որի մօտ գտել են յուզիչ գրութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ գաղտնի ընկերութեան անդամների թուում կան և հայ կանայք: Օրթաքեոյ գիւղում կալանաւորված է Գիւնակեան ընկերութեան զլխաւոր դաւադրներից մէկը»:

Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրագրին հետեւեալ մանրամասնութիւնները: Յունիսի 7-ի երեկոյեան Ֆրանսուհի տիկին Բրանժօ և երկու մեծատուն հայ տիկիններ՝ մայր և աղջիկ ընկան աւազակների ձեռքը: Նրանք գտնվում էին մայրաքաղաքից ըստներով մոտ հեռաւորութեան վրա եղող դատասիրտում: Տիկինները գնում էին բաղանիք, երբ յարձակվեցին նրանց վրա աւազակները և վիրաւորեցին կառապանին: Երեքին էլ փակցրին: Մօրը արձակել են, ապա պրեկով, որ մնացածներին վերադարձնելու համար հարկաւոր է 4000 լիւրա փրկանք: Ֆրանսիական զեսպան կամքն ձեռք է առել խիտ միջոցներ: Ինչպէս հեռագիրը հաղորդում է, փրկանքն արդէն արված է, և կանայք ազատված են:

Կ. Պոլսից հեռագրում են «Daily News» լրագրին յունիսի 8-ից հետեւեալը: «Տեղական թիւրքերը յայտարարում են, որ սուլթանի նախագահութեամբ ժողովում են նորաստեղծ հայ կառուցանների օգտին: Արդէն հաւաքված է 42 ֆունտ (!) կարօտեւաններ համար, և 62 ֆունտ մղկիթներ վերանորոգելու (!) համար»:

ՆԱՄԱԿ ԲՈՒԳԱՐԱՅԻՑ
Ռուսոնի, մայիսի 30-ին
Ամեն տարիայ սովորութեան համեմատ, այս տարի ևս, մայիսի 25-ին հանդիսաւոր կերպով տօնվեց Ս. Հովնաթանի վարժարանի տօնը՝ արական վարժարանի մէջ: Հանդիսարանը գրեթէ լի էր բաղմաթիւսով:

Տեղացի աշակերտուհիները տակաւին գտնէ մի ընէ զարգացած չըլլալուն համար՝ գրեթէ բոլորն էլ մանկական օտանաւորներ ու փոքրիկ անփառ ձուներ արտասանեցին. նոյն իսկ վարժուհին օրվայ պտուղած մի ձու չարտասանեց:

Ամենից վերջ հոգաբարձութեան խնդրանքը, խօսեց Չէլթոնից վերադարձած մի անձն, զեղեցիկ կերպով նկարագրելով ղէլթոնացիների յաջադրութիւնները, մանաւանդ կանանց: Չառը լաւ տպաւորութիւն ըրաւ ժողովրդեան վրա ու ժողովուրդը ուրախ և գոհ սրտով հեռացաւ: Յ. Գ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալ մաստ, մայիսի 20-ին
Գարունն եկաւ և թիւրքահայ գաղթականների խմբերի տուրը սկսեց երեւոյ Սալմաստում: Բայց խեղճ թիւրքահային կարծես վիճակված չէ Պարսկաստանում էլ հանգստութիւն վայելել: Մայիսի 16-ին 54 հոգուց բաղկացած մի խումբ անցնելով սահմանը, մտնում են պարսից հողը և հանդիստ սրտով դուռն մտնում մի աւերակ եկեղեցու մէջ: Քիւրք Շիկակ ցեղապետներից մէկը՝ Ամին-Չաւշին իր աւազակային խումբ յարձակվում է հայերի վրա, երեք հոգի սպանում և երեքին էլ վիրաւորում: Գաղթականները ունենում են միայն չորս զինամուտ առաջնորդներ, որոնք մինչև երեկոյ կաւում են քիւրքերի դէմ և նրանցից սպանում, ինչպէս ասում են, եօթ հոգի և երեքին վիրաւորում: Գիշերով հայերին յաջողվում է փախչել քիւրքերի ձեռքից և Հին-Քաղաք կոչված գիւղում մի պարսիկ մօտ ապաստարան գտնել: Գիւղի պարսիկները կարծելով թէ եկեղեցիները չղաչաղ են, թափվում են անզէն հայերի վրա և բոլորին ձերբակալում: Այժմ այդ խեղճ գաղթականները չըղաչաղ աւանան տակ բանտարկված են Գիւմուսում:

Պարսիկ պաշտօնեաներին շատ ձեռնառու է նըրանց զաւաղ ձանաւել՝ կաշառք պոկելու նպատակով: Բայց Սալմաստի ժողովուրդն անտարբեր չը մնաց, հայերը դէպքի դուռ ճշմարտութիւնը հեռագրեցին թաւրիք իսկ պարսիկ վաճառականներն էլ պատրաստվում են նոյն մարդով հեռագիր խիլել:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԻՑ

Սալ մաստ, մայիսի 10-ին
Սալմաստի նախկին սարգարատ Հաջի-Ղալիբի թոռ Միրզա-Ալին, որը յայտնապէս հայերի ռեսերվ թշնամի է, հայկական հանդերձներով ծագեալ թաւրիքի ձանապարհը բռնում է, որ անց ու դարձ անոռներն ալ ուղ է և այդ կեղծ բարդէ հայերի վրա՝ Նա առաջ պատասխան է պարսիկ վաճառական ոմն Ասնէա Տիւմանցուն, որին աջողութեամբ կողոպտում է, բայց վաճառականի եղբորորդին, հայերի ձեռքով կողոպտվելը անպատուութիւն համարելով՝ ճիւղաւ դիմում է մերձակայ Շաքարեալի դիւրը և հասարակութեան յայտնում իրողութիւնը. այնտեղից նոյնը յայտնում է ձանապարհներին հակող հեճեւ լաղօրքին:

Շաքարեալիցները ամբողջապէս սիւննի աղանդին են պատկանում և ներկայ քաղաքական հանգամանքների պատճառով նրանք էլ սարսափելի թշնամի են հայերին, ուստի մեծ ուրախութեամբ միանում են հեճեւաղօրքին և հետեւում աւազակներին, երևակայելով որ հայերի հետ գործ պիտի ունենան: Աւազակները իրանց վրա յարձակվողներից խոյս տալու մի բանի անաջող փորձեր անելուց յետոյ, երբ տեսնում են, որ իրանց կեանքը արդէն փոսնող մէջ է, անձնատուր են լինում: Այլում է դժոխապէս ձեռք, իբրև հայերի, բայց... վերջի վերջոյ բանից դուրս է գալիս, որ զրանք չիս աղանդին պատկանող մուսուլմաններ են: Նպտեալ աւազակներին յանձնում են խօյի կառավարչին:
Գա այն Միրզա-Ալին է, որը իր սարգարատ-

տուժեան ժամանակ արտաքին գործերի մի-
նիստրին գրեց, որ իբր թէ Սալեմատում ապա-
սանած 500 հայեր սպանուած են պարսիկե-
րին, նպատակ ունենալով այդ միջոցով պարսիկ-
ներին հայերի դէմ գրգռել: Այդ առաջադէպ այդ-
պիսի միջոցով էր ուզում ինքն էլ մէջտեղից մի-
լան կարգել և հարստանալ, բայց նրան չաջող-
վեց: Այսօր էլ նա այդ կեղտոտ միջոցներին է
դիմում, որպէս զի հայերին վնասէ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 յունիսի: Բարձրագոյն ուկադ.
1) Ներքին գործերի մինիստրին, ժանդարմերի
չէֆին, տալ 665, 666 և 667 յօդուածներ մէջ
միջլած իրաւունքները, որոնք վերաբերում են
ժանդարմերի առանձին կարգուսի կառավարու-
թեան: 2) Ներքին գործերի մինիստրին, ժան-
դարմերի չէֆին, թեթևաթիւն տալու համար,
հիմնել ժանդարմերի չէֆի օգնականի պաշտօն,
տալով նրան զինուորական շրջանների զլխաւոր-
ների օգնականի ընդհանուր իրաւունքները և ո-
րոշելով նրա պարտաւորութիւնները Բարձրագոյն
հաստատված առանձին հրահանգներով: 3) Ներ-
քին գործերի մինիստրի օգնականի պաշտօնը,
որը կառավարում էր օտարերկրացիները և ժան-
դարմերի կորպուսի հրամանատար էր, — ոչնչաց-
նել:

Բարձրագոյն հրաման նախնադասներին և
փոխնախնադասներին ուժեղները աւելացնե-
լու մասին, նախնադասներին պաշտօնին մայի-
սի 15-ից յատկացնել, ամեն տեղ կայսրութեան
մէջ, բայց Լեհաստանի թագաւորութեան նա-
խնադասները և այն շրջաններից, որոնք գտնվում
են զինուորական մինիստրութեան վարչութեան
տակ 10,000 ռ. տարեկան ուժեղի, բայց ընակա-
նակ մեծ և ճանապարհածախսերից, իսկ փոխնա-
խնադասներին 4,500 ռուբլի:

ՆԵՒՄՆԻՆՍՈՎԳՐՈՒԿ, 7 յունիսի: Առևտրա-ար-
դիւնաբերական համադրումը ժողովը նշանակ-
ված է օգոստոսին:

ԿԻՏԷՆՅԵՐ, 7 յունիսի: Կիֆէնդէրեան սարի
վրա տեղի ունեցաւ վիճելով I կայսրի արձանի
բացումը, որը կառուցված է զինուորական ֆէ-
լէյնների միջոցներով, որոնք ստորագրութեամբ
ժողովիցին մէկ միլիոն մարկից աւելի: Հանդի-
սին ներկայ էին կայսրը, գերմանական բոլոր
պետութիւնների օգոստափառ ներկայացուցիչ-
ները, որոնց թիւում վերջիններքեան թագաւոր
և վէյմարեան ու բադենեան մեծ գրեքը,
և պատգամաւորներ 16,000 զինուորական ֆէ-
լէյնների կողմից:

ԼՕՆԻՆՍԿ, 7 յունիսի: Ուսանող ստացված
հեռագիրը հաղորդում է, որ յունիսի 9-ին ըն-
կրկնից Վրոսմոնդ կասող շոգենաւը՝ 350
մարդկանցով: Չկորսուածը ազատեցին երկուսին:
Վրոսմոնդ կասող շոգենաւը կէս զիշերին
ընդհարվեց Ուսանողի մօտ մէկ անյայտ շոգենա-
ւին:

Կ. ՊՈԼԻՍ, 9 յունիսի: Աստղագիտի մօտ զը-
անվող երկու տիկիններին իսկոյն արձակեցին:
Երբ պահանջած փրկանքն ստացան աւաղակները:

ԼՕՆԻՆՍԿ, 9 յունիսի: Շանը պաշտօնապէս
յայտարարեց, որ սրանից յետոյ պաշտօնատար
անձանց կը շնորհին զինուորական տիտղոսներ
և չքանչաններ միմիայն որպէս պարգև ծառա-
յութիւնների համար, բայց ոչ թէ ստաշվայ
պէս զրամի համար:

ՍԵՆ-ԼՈՒԻ, 8 յունիսի: Հանրապետական կան-
դիդատ նախագահի պաշտօնի համար ընտրված է
Մակ Կինէյ:

ԵՕԿՉԱՄՍ, 8 յունիսի: Կատրվածների թիւը
նորերս տեղի ունեցած աղբիւրի մակիթացու-
թեան պատճառով համարում են 10,000: Մակ-
իթացութիւնից վնասվեց հիւսիս-արեւելեան ծա-
վարը 70 մղոն տարածութեան վրա: Շատ քա-
ղաքներ կործանվեցին:

ԿԱՅԻՒԷ, 8 յունիսի: Խօշերան նկատելի կեր-
պով թուլանում է կայրէջում և Ալեքսանդրիա-
յում, բայց սաստկանում է Եգիպտոսի մնացած
մասերում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 7-ին	
Լճուցիի վրա 10 ֆունտ արծէ . . .	94 ռ. 05 Կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 > 92 3/8 >
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 32 3/8 >
Ռուկի . . .	արծէ . . . 7 > 50 >
Մաքսային կուպոններ . . .	150 > >
Բորսային դիսկոնտ . . .	5 > 7 1/2 >
4 1/2% պետական ընտա . . .	98 3/4 >
Ներքին 5% առաջին փոխառութի . . .	283 >
— երկրորդ . . .	249 >
5% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի . . .	208 3/4 >
5% պետական երկաթուղ. ընտա 100 1/2 . . .	>
4% ներքին փոխառութեան . . .	93 3/8 >
4 1/2% գրաւ. թղթ. աղն. կալ. բանկի 101 . . .	>
Աղն. կալ. Պետ. բանկի խաղաղութի . . .	>
4 1/2% վկայակ. դրու. հող. բանկի 100 3/4 . . .	>

Փոխ. կրեդիտ. ընկեր. մտա . . .	— > — >
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ ընկերութեան օբլիգացիաներ . . .	101 3/8 >
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ . . .	101 >
Օբլեսայի . . .	100 >
Քիֆլիսի . . .	98 1/4 >
Քիֆլիսի կալ. բանկի 6% . . .	>
5% . . .	>
Քուսկայիսի . . .	6% . . . >
5% . . .	>

ԽՈՒՅԱԿԻՐ՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔՈՒՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՆ՝ ԱՆԻՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՄՆԳԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ
(Կուկիս, վօրոնցօյի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բայց
կիրակի օրերից:
Ա.Ռ.Ա.ՌՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ՝—11—12 ժ. վիրաբու-
ժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդու-
թիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային հ. հիւանդ և երեխ. հ.
Կին-բժիշկ ԳՈՒՆԱՅԷԼԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11
ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. տկանայի, կո-
կորդի, թթի և կրծքի հ. երկուշարթի, չորհրդաբ-
թի և սուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երե-
խայոց և նեարդային հ. երկուշարթի, հիւզարթի
և չարաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
խայոց հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ՝
ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքը. հիւզը. և շա-
բաթի:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշարթի
չորհրդաթի և սուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՂԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և
սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԳՈՒՂԿՈ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէզի, խիւի, ա-
րեանի, կաթի և այլն:

ՎՃՅՈՒՆ 50 կ.: Համախորհրդի (Կոնսիլիումի) և
օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերաբառուչ:
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ

ՎՐՕՏ ԱՋՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ ԹԱՏՐՈՆ
Երեքշարթի, յունիսի 11-ին
Հայ գերատանական խումբը կը ներկայացնի

Պ Է Պ Օ
Կոմէդիա 3 գործ. հեղ. Գ. Սուսլովեանցի
Պէպոյի զերը կը կատարի՝ Մ Ի Ր ա զ և ա Ն,
Կերօյի զերը՝ Տ Ե Ր-Գ ա լ Ե ա Ն:
Տոմարները կարելի է ստանալ թատրոնի կա-
սայում:
Սկիզբն է 8 1/2 ժամին:

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԵՐԲԵՐԵԱՆԸ
Նախկին տարիների պէս այս ամառվայ
ընթացքում ևս ընդունում է ԷՍՍԵՆ-
ՏՈՒՎՈՒՄ ներքին և միզի հիւանդութիւն
ուներցողներին: (№ 60) 5—10

ԿՎԱՐՏԻՐԱ
0 5-ти комнатахъ, со всеми удобства-
ми, стеклянною галлереею и водопро-
водомъ, отдается. Куки, Семеновская
улица, д. № 16.
(№ 63) 4—4

ՄՕՍԿՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ
Հ Ա Մ Ա Ր
քաղաքի կենտրոնում, ԲՕԼՂՄՅԱ ԳՄԻՄ-
ՐՕՎԿԱ (Большая Дмитровка) փողոցի
վրա տրվում են

Վ Ե Ր Մ Ա Լ
Շքեղ կերպով կահավորված ՀԱՄԱՐՆԵՐ:
Բնակիչների համար կան ամեն տեսակ
յարմարութիւններ՝ ՏԵԼԵՖՈՆ, ՎԱՆՆԱ.
ստացիոններ և ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՅ լրարկը-
ներ և այլն: ԳՆԵՐԸ ՉՈՒՄԱՐՆԵՐ:
5—20 (№ 62) Բ. ԱՆԵՏԻՍԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ-ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ

Հինութեան աշխատութիւնների վԱՐՁՈՒԹԻՒՆԸ յայտնում է, որ այս 1896 թվի յունիսի 5-ին,
ժամը 12-ին, նրա ընակարանում, որ գտնվում է Թիֆլիսում, Բախչեվսկի փողոցում, տան
№ 26, նշանակված է մրցում եղևնեայ գերանների մատակարարութեան այդ գերանները, որոնք
հարկուոր են ստալյատակելու համար, պէտք է լինեն զանազան մեծութիւնների և ընդամենը
19,400 խորանարդ ֆուտ:

Այդ մատակարարութեան տեխնիկական պայմանները և կոնդիցիաները կարելի է տեսնել
վԱՐՁՈՒԹԵԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՃՆՈՒՄ առաւօտեան 9 ժամից մինչև 12 ժամը, ամեն օր, բացի
տօն օրերից, նրանք կարող են ուղարկվել ըստ ցանկութեան և պրատով: Յայտարարութիւնները
պէտք է տրվեն անձամբ կամ ուղարկվեն պրատով, կիրված ծրարներով Թիֆլիս-Կարսի երկաթու-
ղու շինութեան աշխատութիւնների վարչութեան ճիշդ հասցեով, և ունենան այս մակագիրը՝ «КЪ
конкуренціи на поставку мостовыхъ брусьевъ»: Յայտարարութիւնների մէջ պէտք է ճիշդ նշա-
նակված լինեն—տիֆլիսի բնակութիւնը, մատակարարութեան ժամանակամիջոցը և տեղը, դիմը՝
թէ վաղօրների մէջ պնտու վարձի հետ միասին, թէ առանց դրան:

Յայտարարութիւնները ներկայացնելիս վարչութեան դրամարկի մէջ պէտք է նախապէս
մտցնվի գրաւական մատակարարութեան արժէքի 5% ընդհանուր գրաւականի համար,
իսկ մատակարարու-
թեան չափի համեմատ յետ կը պահվի ամեն մի վճարումից 10% վերջական գրաւականի համար,
մինչև որ կը կազմվի գրաւականի ընդհանուր գումարը, որը կազմում է ամբողջ մատակարարու-
թեան արժէքի 10% ը: (№ 67) 1—3

ՀԵՂԵՂՆԵՐԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ Գումայի ԳՈՐ-
ՍԱՎԻԻՉ ՅԱՆՉՆԱՍՏՈՂՈՎԻ Նախագահը՝ համաձայն յանձնաժողովի 1896 թվի յունիսի
5-ի վճար, արանով տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այն անձինք, ո-
րոնք վնասվել են հեղեղումից, կարող են դիմել Յանձնաժողովին անձնական բացատ-
րութիւններ և յայտարարութիւնների համար, շարքեր մի անգամ, շարքեր օրերը,
երեկոյեան 8 ժամից, Քաղաքային վարչութեան տանը, իսկ Յանձնաժողովին արվելը
գրաւոր խնդրքները կարող են սույ Քաղաքային Բարտուղարին, ամեն օր, մինչև ցե-
րեկվայ 2 ժամը, Քաղաքային վարչութեան շինութեան մէջ: (№ 68) 1—5

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԳՊՐՈՑԻ վարչութիւնը արանով յայտարա-
րում է, որ պարտւում վերաբնութիւնները սկսվելու են օգոստոսի 26-ին, իսկ նորիկ
աշակերտների ընտելութիւնները—սեպտեմբերի 2-ին: Նորիկների խնդրները կընդունվեն
օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 1-ը:
Խնդրների հետ պէտք է անպատճառ ներկայացվին. 1) Տնտեսան վկայականը (խ-
կականը և ոչ քաղաւածք) և 2) ծաղկի վկայականը: Առանց վկայականների աշակերտ-
ները չեն ենթարկվի ընտելութեան:
1—1 Տեսուչ՝ Ս. Բալաղեանց

ՆՈՅԱ ԿԱՅՏԵՐԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՆ ԻՇԽԱՆՈՒՅԻ ԿՍԵՆԻՍ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎ-
ՆԱՅԻ ՆԵ ՄԵՆ ԻՇԽԱՆ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՄԻՒՅՈՅԻՉԻ Հովանաւորութեան տակ գտնվող
ԳՈՒԹՅՈՒՄ ՆԱՀԱՆԳԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՍՏՈՂՈՎԸ
հեղեղումներից և չը տեսնված խոր ճիւղից վնասված Գուժայի նահանգի ազգայնա-
կութեանը օգնութիւն հասցնելու համար, արանով յայտարարում է, որ գրամով և իրե-
րով նուիրաբերութիւնները յօդուս վնասվածների ընդունում է Գուժայի քաղաքում,
Մանաժողովի նախագահ՝ Գուժայի նահանգական աշխուհանութեան պարագլուխ
իշխան Ս. Գ. Մերեթիլի:
(№ 66) 2—3

ՊԱՆՍԻՕՆ ՏԵՐ-ՅԱԿՈՒԲԵԱՆԻ
(ՄԻԱԿ ԵՐԿՐՈՐԻ ԿԱՐԻ ՄԱՍՆԱՍՈՐ ՈՒՍՈՒՄՆ. ԹԻՖԼԻՉՈՒՄ)

Ընդունում է երթևեկի, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ, պատ-
րաստում է գի մնազիւններին, կազմեաներին կորպուսի, զեմիլմէլնի,
բէալական ուսուցիչ արանների համար:
Ուսուցիչական տարից վարձն է փոքր պատրաստականի համար 60 ռուբլի:
մինչև երկրորդ դասաւոր 100 ռ. երկրորդից վեր՝ 150 ռուբլի:
Գիշերօթիկները ԱՄԱՌԸ ԿԱՊՐԵՆ և ԿՈՒՍԱՆԵՆ ԲՈՐՃՕՄ ԱՄԱՐԱՆՈՑՈՒՄ: Բորժով
տանելու համար ընդունվում են և նորիկ աշակերտները երթևեկի հետ ուսու-
մը ամբողջ ամառ կը շարունակվի և Թիֆլիսում, որ նոյնպէս ընդունվում
են նոր աշակերտներ պատրաստելու համար: Յանկացողների համար աւանդվում են հին և
նոր լեզուներ:
Հասցէն. ТИФЛИСЪ. Сололаки. Гановская ул., № 11. собст. домъ.
(№ 47) 10—10

ПОЛОЖЕНИЕ АРМЯНЪ ВЪ ТУРЦІИ
ДО ВМЪШАТЕЛЬНОСТВА ДЕРЖАВЪ ВЪ 1895 Г.

ՆՈՐ ԳՐԻԻ 2-ԲԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ
Պարունակում է՝ Գաղափարի ձաւը, յօդուածներ՝ ԲՈՒՆԵՎԱԿՍԵՆԻ, ՄԱԿՈՒԻ, ԳՐԻՆԻ
ԳԻՒԼՕՆԻ, ԳԻԷՎԻ և ուրիշներին:
Առաջարան պրոֆեսոր Լ. Ա. Կոմարովսկու
ՄԱՏԹԷՍՈ ՊԱՏՐԻԱՐԳ ԻՉՄԻՐԵԱՆԻ և Է. ԳԻՒԼՕՆԻ պատկերներով: Երես 443+XXVIII
ԳԻՆԵ Է 1 ՐՈՒԲԼԻ
Պահաւար՝ МОСКВА: въ книжный магазинъ Н. П. Карбасникова, Моховая, д. 5,
Нееловой. (№ 61) 5—10

ՄՇԱԿԻ՝ ԽՄԱԿՐԱՏԱՆԸ
վաճառվում են հետևեալ հայերէն գրքերը ԳԻՆԸ
1) ԻՎ ԵԼԻՆՍԿ, Գրիգոր Արժրուհու 50 կօպ
2) ԹԻՒՐԻՔՅՑ ՀԱՅՏԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆ, Գ. ԱՐՃՐՈՒՆՈՒ 20 "
3) ՄՏՔԻ ՄՇԱԿԸ, Խ. Մալուժեանի 50 "
4) ՍԱՍՈՒՆ, Ա. Քալանթարի 20 "
Օտարաբարբաքցիները կարող են վճարը փողի տեղ ուղարկել պոստային մարկա-
ներով:
(№ 59) 10—10